

Աղետից հետո ապահովագրական հատուցումների պլանավորում

Եթե աղետի հետևանքով տուժել կամ քանդվել է ձեր տունը, դա կարող է առաջ բերել ֆինանսական զգալի մարտահրավերներ: Հնարավոր է, որ դուք ստիպված լինեք շատ արագ խիստ կարևոր բազմաթիվ որոշումներ կայացնել: Որևէ գործողություն կատարելուց առաջ տեղեկացե՛ք աղետից վերականգնման ձեզ հասանելի տարբերակների մասին, հատկապես նրանց, որոնք առնչվում են բնակելի գույքի ապահովագրությանը և տան վերակառուցման կամ ձեր հիփոթեքային վարկի մարման վերաբերյալ որոշմանը:



Բնակարանի ապահովագրության հատուցումը ստանալիս հարկավոր է հաշվի առնել երեք գործոն.

- 1 Հասկացե՛ք ձեր վկայագրի մանրամասները:** Ձեր բնակելի գույքի ապահովագրության ծածկույթը կարող է ներառել համապատասխան աղետից հետո վերանորոգման բոլոր ծախսերը կամ դրանց մի մասը: Հասկացվելիք գումարը կախված է վկայագրի տեսակից, ապահովագրական գումարից և չհատուցվող գումարներից: Հնարավոր է, որ դուք ստանաք նախնական մասնակի հատուցում՝ ժամանակավոր կամ շտապ վերանորոգումների և ձեր վնասված գույքը փոխարինելու հարցում օգնելու համար:
- 2 Մարել վա՛րկը, թե՛ վերակառուցել տունը:** Ավելի լավ է մարել ձեր հիփոթեքային վա՛րկը, թե՛ վերակառուցել տունը: Հիշե՛ք. դուք կարող եք համապատասխան թեկնածու լինել ձեր տան ամբողջական վերանորոգման նպատակով լրացուցիչ ֆինանսական միջոցների ստացման համար: Հնարավոր է նաև դիմել ձեր ապահովագրական հատուցման վերանայման համար, եթե վերանորոգման / վերակառուցման ծախսերը գերազանցում են սկզբնապես ակնկալված ծախսերը: Աղետից տուժած սեփականատերերը կարող են առավել մեծ գումար ստանալ իրենց ապահովագրողից, եթե ցույց տան, որ վերակառուցման ծախսը գերազանցում է նախնական ապահովագրական գումարը:
- 3 Պլանավորե՛ք:** Եթե ձեր տունը դեռ հիփոթեքային վարկի տակ է, ապահովագրական ընկերությունը վճարելի չեկեր կտրամադրի ձեր և ձեր հիփոթեքային կառավարչի անունով: Որոշ վարկատուներ կարող են առաջարկել տվյալ միջոցներն ուղղել հիփոթեքային հաշվեկշիռին: Սակայն ձեր հիփոթեքի մարումը տվյալ միջոցներով պարտադիր չէ՝ բացառությամբ հատուկ հանգամանքների: Պայմանավորվե՛ք ձեր հիփոթեքային կառավարչի հետ՝ ձեզ հասանելի տարբերակների մասնախնայում և կենսունակ պլան կազմելու համար: Եթե ձեր հիփոթեքը պատկանում է «Fannie Mae» ընկերությանը, ապա ձեր հիփոթեքային կառավարիչը կպահի ձեր ապահովագրական փոխհատուցման գումարները տոկոսային եկամտի հաշվի վրա, մինչև կորոշվի, թե արդյոք վերակառուցվելու է, և ինչպես է վերակառուցվելու տունը:

Վերակառուցումը դիտարկելու պատճառներ.

- ✓ Ապահովագրությունը կարող է ծածկել վերակառուցման ծախսը
- ✓ Պաշտպանե՛ք և նպաստե՛ք թաղամասի վերականգնմանը
- ✓ Ավելի արագ վերադարձրեք աղետին նախորդած «բնականոն» վիճակը

Եթե դուք օգտագործեք ձեր ապահովագրական փոխհատուցումը հիփոթեքի մարման համար, իսկ դրանից հետո որոշեք վերակառուցել տունը, դուք կարող եք կառուցապատման վարկ վերցնելու կարիք ունենալ, որը հիմնականում կարող է հասանելի չլինել: Վարկի այս տեսակը սովորաբար պահանջում է դրական վարկային պատմություն և ևս մեկ երկարաժամկետ հիփոթեք շինարարության ավարտից հետո:

«Աղետից վերականգնումը կարող է երկար և հուզական առումով բարդ ընթացք լինել, ուստի որոշումներ կայացնելիս օգնող մեկի ներկայությունը մեծ դեր ունի», – Քեյթ Բալզրը, «Փողի միջազգային կառավարման» («MMI») բիզնեսի զարգացման գծով տնօրեն և «MMI»-ի «Project Porchlight» ծրագրի ստեղծող, որի օգնությամբ գործում է «Fannie Mae»-ի 855-HERE2HELP աղետից վերականգնման խորհրդատվական թեժ գիծը:

«Fannie Mae»-ի 855-HERE2HELP թեժ գիծը

«Fannie Mae»-ի 855-HERE2HELP՝ աղետից վերականգնման խորհրդատվության ծառայությունը կօգնի ձեզ ապահովագրության, վերակառուցման տարբերակների և այլ հարցերով:

ԱՄՆ Բնակարանային և քաղաքային զարգացման դեպարտամենտի («HUD») կողմից հաստատված բնակարանային խորհրդատուները կգնահատեն ձեր կոնկրետ իրավիճակը և կմշակեն աղետից վերականգնման անհատական պլան: Նրանք կարող են օգնել ձեզ լրացնելու ապահովագրական հատուցման դիմումը և դիմելու ֆինանսական օժանդակության համար, այդ թվում՝ Արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալությունից («FEMA») աջակցություն և Փոքր բիզնեսի կառավարման գործակալությունից («SBA») արտակարգ իրավիճակի վարկեր ստանալու համար:



Դիմե՛ք մեր 855-HERE2HELP թեժ գծին
855-437-3243



Իմացե՛ք ավելին առցանց
www.fanniemae.com/InsuranceHelp